



Հայաստանի Ամերիկյան Համալսարանը 20 տարեկան է

Այսօր տեղի ունեցած մամուլի ասուլիսում Հայաստանում Ամերիկյան Համալսարանի հիմնադիրները, ովքեր ԱՄՆ-ից Հայաստան էին ժամանել համալսարանի հորեյանական միջոցառումներին մասնակցելու համար, ներկայացրին համալսարանի ստեղծման պատմությունը, այն հեռանկարները, որ ունի Հայաստանի լավագույն ուսումնական հաստատություններից մեկը:

Միհրան Աղբաբյանը՝ ՀԱՀ հիմնադիր և պատվավոր նախագահը, խոսեց այն մասին, թե ինչպե՞ս մտահղացավ Հայաստանում նման համալսարան հիմնելու միտքը. «Երկրաշարժից հետո եկել էինք Հայաստան, և այդ ժամանակ այդ միտքը եղավ, որ Գյումրիի քանդված դպրոցների փոխարեն համալսարան հիմնվի», - ասաց նա:

Հետո արդեն՝ Հայ Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ Լուիզ Միմոն Մանուկյանի ու Կալիֆորնիայի համալսարանի օգնությամբ ձեռնամուխ են եղել իրենց մտադրության իրականացմանը: «Լուիզ Միմոն Մանուկյանը խոստացավ նյութապես օգնել, իսկ համալսարանի 8 ներկայացուցիչներ 90թ, հունիսին եկան Հայաստան, որպեսզի տեսնեն, թե ի՞նչ հնարավորություններ կան, և հանգեցին այն եզրակացության, որ պետք է հիմնվի նման համալսարան»:

Այս գաղափարին հավանություն է տվել նաև Կրթության նախարարությունը, հավանության արժանացավ նաև ՀՀ կառավարության կողմից, և... Հայ Բարեգործական Ընդհանուր Միության, Կալիֆորնիայի համալսարանի և ՀՀ կառավարության ջանքերվ հիմնվեց ու բացվեց Հայաստանի Ամերիկյան համալսարանը:

ՀԱՀ հիմնադիր դեկան Արմեն Տեր Կյուրեղյանը ներկայացրեց համալսարանի կրթաորակական առանձնահատկությունները: Նա նշեց, որ Հայաստանի Ամերիկյան և ԱՄՆ Կալիֆորնիայի համալսարանների միջև գործում է համաձայնագիր. ըստ որի կառուցվում է նրանց գործունեությունն ու համագործակցությունը: Բացի այդ, առկա է նաև ուսման որակի հավաստագրային կարգ, որը հաստատում է, որ ՀԱՀ-ն իր ուսման որակով համապատասխանում է միջազգային չափորոշիչներին, և ուսումնառությունն իրականացնում է Կալիֆորնիայի համալսարանի չափանիշներին համապատասխան:

Հատկանշական է նաև այն, որ համալսարանի դասախոսների մեծամասնությունը դոկտորի կոչում ունեն. նրանք իրենց կրթական աստիճանը ստացել են ամերիկյան և եվրոպական համալսարաններում:

Հայաստանի Ամերիկյան համալսարանի նախագահ Բրյուս Պոդոսյանը նախ ներկայացրեց, թե համալսարանի 20-ամյա տոնակատությունների շրջանակներում ինչ մեծածավալ աշխատանքներ են կատարվել, ապա նաև, թե հեռանկարում ինչ անելիքներ կան:

«Մենք այս ընթացքում հավաքել ենք Ամերիկյան համալսարանի պատմությունը, որը կիրառարակվի առանձին գրքով և հասանելի կլինի բոլորին: Բացի այդ, համալսարանի մասին ֆիլմ է նկարահանվել, որի ցուցադրությունը կկայանա ուրբաթ օրը»,- տեղեկացրեց Բրյուս Պոդոսյանը:

Նա ընդգծեց, որ Հայաստանի Ամերիկյան համալսարանը փորձում է առավել մեծացնել միջազգային կապերը, կրթական գործընթացում ներառել նաև արտասահմանցի ուսանողների: Համալսարանի նորամուծություններից մեկն էլ այն է, որ `2012 ուսումնական տարվանից համալսարանը կունենա նաև բակալավրի կրթական ծրագիր:

Բրյուս Պոդոսյանն ընդգծեց նաև, որ իրենց շրջանավարտներն աշխատում են աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում նաև `Հայաստանում: Նրանց թվում կան փոխնախարարներ, բանկերի ղեկավարներ, դասախոսներ: